ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ»-ի 4-րդ կետի տեղեկացնում եմ, որ ՀՀ Շիրակի մարզի «Բյուրակնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված է մրցույթ:

Կից ներկայացնում ենք խորհրդի որոշման քաղվածքը:

Առդիր՝ 1 թերթ:

ՀՀ Շիրակի մարզի «Բյուրակնի միջնակարգ դպրոց»
պետական ոչ առևտրային կազմակերպության
խորհրդի նախագահ՝ Ա. Ֆարմանյան

17.06.2019թ.

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 09686-19
17. 06. 19թ.

ՔԱՂՎԱԾՔ

Հայաստան Հանրապետության Շիրակի մարզի «Բյուրակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 12-ի թիվ 6 արձանագրությունից

Օրակարգում.- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բյուրակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարման մասին;

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը>> հաստատելու մասին ՀՀ կառավարության 04.03.2010 թվականի թիվ 319-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթները՝ ՀՀ Շիրակի մարզի «Բյուրակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը.

Որոշում է՝

1. Հայտարարել մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Բյուրակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:
2. Մրցույթն անցկացնել ՀՀ Շիրակի մարզի «Բյուրակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում՝ 2019 թվականի օգոստոսի 12-ին, ժամը 14:00-ին:
3. Մրցույթի մասնակիցների գործերն ընդունել ՀՀ Շիրակի մարզի «Բյուրակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում մրցույթի մասին հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում՝ 03.07.2019 թվականից 01.08.2019 թվականի ժամանակահատվածում՝ ժամը 10:00- 15:00, բացի ոչ աշխատանքային օրերից:
4. Մրցույթ հայտարարելու մասին կառավարման խորհրդի որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին:
5. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության ոլորտի պետական լիազոր մարմնին:
6. ԶԼՄ-ներում մրցույթ հայտարարելու մասին առաջին հայտարարությունը հրապարակել 28.06.2019 թվականին, երկրորդը՝ 03.07.2019 թվականին:
7. Մրցույթին մասնակցել ցանկացողներին դիմումների /գործերի/ ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի նախագահ Ա.Ֆարմանյանի վրա:

ՀՀ Շիրակի մարզի «Բյուրակնի միջնակարգ դպրոց»

ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ՝ **Ա.Ֆարմանյան**

17.06.2019թ.